

հաց փոխ առնելու Գալօն բերում է մի քանի հատ գարու սև հաց: Բայց շատ ուշ է վերագառնում: Շուտով «հաւար» է ընկնում գիւղը: Մարտիրոս աղայի կալում «քսան սայլնոց բրնձի պէս գարու դէզը, որ այդ օրը միայն կրել, դիզել էին խեղճ Գալօի արտերից, դժուրի պէս վառում էր»...

Գալօն էր հրդեհել, և այժմ էլ հանգցնելու պատրուակով աւելի թէժացնում ու բորբոքում էր կրակը:

«Կրակը սրբեց, լափեց, տարաւ, մոխրակոյտի վերածեց Մարտիրոս աղայի ամբողջ կալն ու խոտերի էլ կէսն այրել, պըրծել էր, երբ հաղիւհազ կարողացան ամբողջ գիւղով մի կերպ մարել, հանգչնել: Կէս գիշերը անց էր արդէն, երբ ամբոխը տուն ցրուեց: Գալօն էլ ուշ տուն գնաց ու կեանքի մէջ գէթ մի գիշեր, թէպէտ քաղցած, բայց հովացած հանգիստ սրտով քուն մտաւ: Կրակը մարեց... և իր հետը քանի-քանի Գալօի պէս վառուած, դազուած բոց սրտերի կրակ մարեց...»

Վրէժխնդրութեան ձեռք, ինչպէս տեսնում էք, ասպետական չէ: Բայց տարօրինակ չէ՞ սարկայնել, անասնացնել մարդուն և յետոյ նրանից պահանջել, որ իր վրէժն արտայայտի ասպետական ձևով: Անիշխանական հոգեբանութիւնը ծայրայեղ ստրկութեան ծնունդն է և նրա հոգեվարքի շղաձգութիւնը:

Տ. Յ.

Յարութիւն եսայեան. «ԼՕԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ». պատկեր. հրատարակեց Տիգրան Նուրալեան. 32 էր. գ. 8 կ. Թիֆլիս, 1903 թ.

Դուք չառ անգամ կարդացած կը լինէք լրագիրներում թղթակցութիւններ խաբերայ «հէքիմների» մասին, որոնք չա հագործում են ժողովրդի դիւրահաւատութիւնը և նախապաշարմունքները: Դուք կարդացած կը լինէք անշուշտ այնպիսի «հէքիմների» մասին, որոնք բժշկում են գեղջկուհիներին չբերութիւնից, և հազդին փողեր են կորզում այդ միամիտ արարածներից ու իրանց կրքերին յագուրդ տալիս նրանցից գեղեցիկների հետ:

Այդպիսի մի հէքիմ է պ. Շսայեանի Վօխմանի հէքիմը:

Եթէ պ. Շսայեանը գեղարուեստագէտ լինէր, նա կը տար մեզ այդպիսի հէքիմի մի ուղիղ տիպ, կը ծանօթացնէր մեզ նրա հոգեբանութեան հետ: Բայց նա գեղարուեստագէտ չէ, ուստի և բաւականանում է արձանագրելով այն, ինչ որ կարող էր նկատել և պատմել ամեն մի հասարակ գեղջկուհի:

Մի բան միայն չէր կարող պատմել այդ գեղջկուհին, գոնէ

այնպէս բացարձակ կերպով, ինչպէս պատմել է պ. Եսայեան, այն է՝ Նոյեմբարի առնանգումը, բայց այդ առաւելութիւն չէ, այլ պակասութիւն:

Պ. Եսայեանի պատկերները ցոյց են տալիս, որ նա ոգևորուած է ժողովրդական նախապաշարմունքների հետ կրու-ւելու ցանկութեամբ և ղեկավարում է համակրելի դիտում-ներով, ուստի շատ տարօրինակ է, որ նա իրան թոյլ է տալիս առնանգման այնպիսի ցինիկ նկարագրութիւն, որ վայել է մի-այն պոռնկագիրներին:

Եթէ այդ նկարագրութիւնը չը լինէր, մենք պ. Եսայեանի պատկերը կը դասէինք այն զրբոյկների շարքը, որոնք գեղա-րուեստական արժանաւորութիւններ չ'ունենալով հանդերձ՝ կա-րող են համարուել օգտակար ընթերցանութեան նիւթ՝ գեղա-րուեստականութեան նկատմամբ ոչ խստապահանջ ընթերցողնե-րի համար:

Տ. Յ.

Ա. Յ. Աւան. «Արիւն». Քրդական բարբերից. Արտատպած «Ճարագ» շաբ-թաթերթից. 24 եր. դ. 10 կ. Ս.-Պետերբուրգ, 1902 թ.

Բաւրը և Մեհրին երեսայութիւնից սկսած սիրում են միմիանց: Նրանք պիտի վերջիվերջոյ ամուսնանան: Բայց Մեհ-րին սաստիկ դուր է գալիս հարեան ցեղին պատկանող մի քրդի, Ռահիմ բէգի որդի Սուլօին:

Մեհրի հայրը մերժում է բոլոր փեսացուներին և ի մի-ջի այլոց նաև Սուլօին: Նա ու Բաւրի հայրը վաղուց վճռել են ամուսնացնել իրանց փոխադարձ սիրով կապուած զաւակնե-րին: Սուլօն վճռում է փախցնել Մեհրին և մի օր, երբ Մեհ-րին իր ընկերուհիների հետ զբօսնում է դաշտում, Սուլօն եր-կու ընկերներով յարձակւում է նրա վրայ ու փախցնում *) Բաւրը իմանում է այդ, ընկնում է նրանց յետևից, սպանում է Սուլօին և ազատում Մեհրին: Մեհրին պիտիւում է ուշաթա-փութիւնից՝ նայում է Բաւրին, բացականչում է. «Ա՛խ, փր-կիչս...» և «ապա մի վայրկեան լռութիւնից յետոյ յետ ընկաւ, չոսած աչքերով նայեց հօրը և կրկին չչնջաց՝ յենուելով Բաւրի կրծքին.

*) Այդ տեսլանը շատ յիշեցնում է պ. Աօի «Մեկիւրի Աղջիկ»-ի և պ. Ահարոնեանի «Սև օրեր»-ի նոյնանման տեսլանները, բայց գեղարուեստօրէն ան-համեմատ ցած է նրանցից: